ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՄԵՋ

Ապրիլ 18-ին Կալկաթա ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն պատվիրակություն մը, բաղկացած գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանե և դիվանապետ տիար Հայկ Առաքելյանե։

Դամ-Դամ օդանավակայանին մեջ պատվիրակությունը դիմավորեցին Կաթողիկոսական պատվիրակ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս, հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Պողոս քահանա Պետրոսյան, եկեղեցական վարչության անդամները և հայ հավատացյալներ։

Հավատացյալներու ուրիշ խումբ մը անձկությամբ կսպասեր եկեղեցվո բակին մեջ պատվիրակության ժամանման։ Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը «Հրաշափառ»-ով առաջնորդվեցավ տաճար, ուր կարճ արարողութենե մը ետք, ներկաներուն հաղորդեց Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ողջույններն ու հայրապետական օրհնությունները։

Հաջորդ օրը, ապրիլ 19-ին, գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը և Հ. Առաքելյան, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանի, այցելեցին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանը։ Հաստատության երկսեռ ուսանողությունը ուրոտընդոստ ծափահարություններով, ուրախության աղաղակներով և ծաղկեփնջերով ընդունեցավ Մայր Աթոռի պատվիրակությունը։

Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը աշակերտության հաղորդեց Վեհափառ Հայրապետի ջերմ ողջույններն ու հայրական օրհնությունները, ինչպես նաև Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության սրտագին բարևները։ Սրահը դղրդաց ծափերու փոթորկեն։ Ս. Էջմիածնի և Հայրենիքի կարոտը կայրեր աշակերտության սրտին մեջ. այդ կարելի էր տեսնել անոնց ակնարկին խորը։ Կուզեին լսել, շատ լսել իրենց պաշտելի Ս. Էջմիածնի և վարդաշող, սիրելի Հայրենիքի մասին։ Սրբազանը կրցած էր կարդալ անոնց սիրտը, ուստի խոսեցավ անկեղծ շեշտով, հուզումով և երկարորեն կանգ առնելով Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի հրաշալի վերելքին վրա։ զոր մեր Հայրենիքը արձանագրած էր վերջին քառասնամյակի ընթացքին, գիտության և մշակույթի բոլոր մարզերուն մեջ։ Սրբազանը երկարորեն խոսեցավ նաև Հոգևոր Ճեմարանի և Հայաստանի դպրոցներու մասին։

Խոսք առավ նաև պր. Հ. Առաքելյանը և շեշտեց, որ Սփյուռքի հայ երիտասարդությունը կարիքն ունի Էջմիածնի և Հայրենիքի հոգևոր սննդին, Հայրենիքի լույսին. Էջմիածնի աղոթքին։ պահելու համար իր ազգային դիմագիծը, իր հայու հոգին՝ օտար երկինքներու տակ։

Կիրակի, ապրիլ 23-ին, եպիսկոպոսական հանդիսավոր պատարագ մատույց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը։ «Հայր մեր»-ենետք, պատարագիչ սրբազանը կարդաց Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հնդկահայ գաղու-

թին ուղղած կոնդակը, ապա խոսեցավ հոգեշունչ և հայրենաշունչ քարոզ մը, հավատացյալներուն ներկայացնելով Մայր Աթոռի բարգավաճ ու ծաղկյալ ներկան և Մայր Հայրենիքի աննախընթաց վերելքը։ Հավարտ սուրբ պատարագի, Հայկազուն արքեպիսկոպոսը հավատացյալներուն բաժնեց Վեհափառ Հայրապետի կողմե ղրկված փոքր, ոսկեզօծ Էջմիածնի խաչեր։

Նույն օրը երեկոյան, եկեղեցվո վարչության նախաձեռնությամբ։ Մարդասիրական ճեմարանի դաշտին մեջ տեղի ունեցավ թեյահանդես մը ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակներուն։ Ներկա էր մեծ թվով հայություն։ Գործադրվեցավ գեղարվեստական կոկիկ հայտագիր մը, որմե ետք խոսեցան գերաշնորհ Տ. Ասողիկ և գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանները։

Մայր Աթոռի պատվիրության այցելությունը անգամ մըն ալ ցույց տվավ, որ Հնդկաստանի հայության և Ս. Էջմիածնի միջև գոյություն ունեցող դարավոր ու նվիրական կապը ամուր է և անխզելի, և թե Հնդկաստանի հայությունը ինչպես անցյալին, նույնպես և այսօր ճանչցած է ու կճանչնա հայ եկեղեցվո գերագույն կեդրոն Ս. Էջմիածինը և գերագահ մեկ հեղինակություն՝ հանձին Ամենայն Հայոց Հայրապետի։

Ապրիլ 24-ին, ի հիշատակ մեր բյուրավոր նահատակներուն, Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի հանդիսասրահին մեջ տեղի ունեցավ սգահանդես մը։ Այս առթիվ ճեմարանի աշակերտությունը գործադրեց կոկիկ հայտագիր մը, որմե ետք խոսեցավ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս ապրիլյան մեծ եղեռնի մասին և կոչ ըրավ հավատարիմ մնալ մեր նահատակներուն ոգիին և հիշատակին։

Մայր Աթոռի պատվիրակները հինգշաբթի, ապրիլ 27-ին, մեկնեցան դեպի Լիբանան։

Բարի ճանապա՜րհ Մայր Աթոռի պատվիրակներուն և Հայրենիքի կռունկներուն։

Ա.

Կալկաթա, 6 մայիս 1961